ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«15» մարտի 2023 թվականի N 632-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 04 -Ի N 963-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 04-ի <<Քաղաքացի Արտուշ Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղ. 7-րդ փողոց 8 շենք N 54 բնակարանին կից ինքնակամ կառուցված 5,29 քառակուսի մետր մակերեսով աստիճանները և 1(մեկ) պատուհանը ինքնակամ ձևափոխված դրան օրինական ճանաչելու մասին>> N 963-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 20/02/2023 թվականի N Կ-20022023-08-0032):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 04-ի <<Քաղաքացի Արտուշ Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղ. 7-րդ փողոց 8 շենք N 54 բնակարանին կից ինքնակամ կառուցված 5,29 քառակուսի մետր մակերեսով աստիճանները և 1(մեկ) պատուհանը ինքնակամ ձևափոխված դրան օրինական ճանաչելու մասին>> N 963-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) որոշման 4-րդ կետում <<օրինական:>> բառից հետո լրացնել <<Նշված շինությունների զբաղեցրած մակերեսների չափով փոփոխել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին անհատույց՝ բաժնային սեփականության իրավունքով փոխանցվող հողամասերի բաժնային սեփականությունը: >> բառերը:

14.03.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«15» նոյեմբերի 2023 թվականի №631-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ, 10 ՇԵՆՔ, 1/1 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0014-0001-003-100) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Մարութ Խանչալյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №4094 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված շինության բաժանման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1) 39.03 քմ մակերեսով շինությունը հասցեավորել՝
**ԳՅՈՒՄՐԻ Ք., ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ, 10 ՇԵՆՔ, 1/1:**
2) 57.66 քմ մակերեսով շինությունը հասցեավորել՝
**ԳՅՈՒՄՐԻ Ք., ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ, 10 ՇԵՆՔ, 1/3:**

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«15» Մարտի 2023 թվականի N 630-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25 -Ի N 724-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2017 թվականի մայիսի 25-ի <<Քաղաքացի Արտյոմ Գուրգենի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Խաղաղության հրապարակ թիվ 4 շենքի N 12 հասցեով բնակարանին կից, շենքի ծավալում ինքնակամ կառուցված 3,2 քառակուսի մետր մակերեսով բնակարանը, ինքնակամ բացված 1 դուռն օրինական ճանաչելու մասին>> N 724-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 28/02/2023 թվականի N Կ-28022023-08-0017):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2017 թվականի մայիսի 25-ի <<Քաղաքացի Արտյոմ Գուրգենի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Խաղաղության հրապարակ թիվ 4 շենքի N 12 հասցեով բնակարանին կից, շենքի ծավալում ինքնակամ կառուցված 3,2 քառակուսի մետր մակերեսով բնակարանը, ինքնակամ բացված 1 դուռն օրինական ճանաչելու մասին>> N 724-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<3-րդ բաժնի>> թվից և բառից հետո լրացնել <<28-րդ կետի>> թիվը և բառերը, <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<և հարևանների կողմից տրված համաձայնությունը՝ >> բառերը:

2) նախաբանում << հիմք ընդունելով >> բառերից հետո լրացնել << 01/03/2023 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը՝ նոտարական ակտի կոդ:604-20230301-2-6718266>> թվերով և բառերով:

14.03.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի 2023 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*«14» [illegible] 2023 թվականի N629-Ա*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԶՈՅԻ ՓՈՂՈՑ N6 ՀԱՍՑԵԻ 101.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻ ( 88.41 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ 151.77 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Լազոյի փողոց N6 հասցեի 151.77(հարյուր հիսունմեկ ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N29112022-08-0073 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N26-Ա որոշումը և քաղաքացի Ռուզաննա Մարտիրոսյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականին N9125 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Լազոյի փողոց N6 հասցեի, օրինականացված 101.5 (հարյուր մեկ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (88.41(ութսունութ ամբողջ քառասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը՝ 705222 (յոթ հարյուր հինգ հազար երկու հարյուր քսաներկու) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Ռուզաննա Մարտիրոսյանին:
2. Գյումրի քաղաքի Լազոյի փողոց N6 հասցեի 151.77(հարյուր հիսունմեկ ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1037196 (մեկ միլիոն երեսունյոթ հազար հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Ռուզաննա Մարտիրոսյանին:
4.Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Ռուզաննա Մարտիրոսյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
5.Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Ռուզաննա Մարտիրոսյանի միջոցների հաշվին:

13.02.2023

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

**«14» Մարտի 2023 թվականի N 628-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՓՈՂՈՑ 5-ՐԴ ԱՆՑՈՒՄԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 781,03 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 591.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (545.01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոց 5-րդ անցումի հարևանությամբ, 781.03(յոթ հարյուր ութսունմեկ ամբողջ երեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 591.6(հինգ հարյուր իննսունմեկ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր արտաքին (545.01 (հինգ հարյուր քառասունհինգ ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտեխսպասարկման կայան, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Էդգար Զարգարյանը :

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոց 5-րդ անցումի հարևանությամբ, 781.03(յոթ հարյուր ութսունմեկ ամբողջ երեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 591.6(հինգ հարյուր իննսունմեկ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր արտաքին (545.01 (հինգ հարյուր քառասունհինգ ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտեխսպասարկման կայանը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Էդգար Զարգարյանին:
3. Գյումրի քաղաք Խրիմյան Հայրիկի փողոց 5-րդ անցումի հարևանությամբ, 781.03(յոթ հարյուր ութսունմեկ ամբողջ երեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակություն բնակելի կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության:
4. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
5. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

13.03.2023

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

**«_14_» _մայիսի_ 2023 թվականի N _627-Ա_**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Լ. ՄԱԴՈՅԱՆ ՓՈՂՈՑ N37/11 ՀԱՍՑԵԻ 28.31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻ ( 24.95 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ 28.31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց N37/11 հասցեի 28.31(քսանութ ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտնակը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N24102022-08-0044 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N26-Ա որոշումը և քաղաքացի Գևորգ Սահակյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականին N16050 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց N37/11 հասցեի, օրինականացված 28.31(քսանութ ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (24.95(քսանչորս ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը՝ 77145 ( յոթանասունյոթ հազար հարյուր քառասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Գևորգ Սահակյանին:
2. Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց N37/11 հասցեի 28.31(քսանութ ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 297651 (երկու հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր հիսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Գևորգ Սահակյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Գևորգ Սահակյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Գևորգ Սահակյանի միջոցների հաշվին:

13.03.2023

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

**«14» Սեպտ. 2023 թվականի N 626-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ N70/2 ՀԱՍՑԵԻ 5.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ 7.62 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏՅՈՄ ՄԱՀԼԱՄՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Մեքենավարների փողոց N70/2 հասցեի 7.62(յոթ ամբողջ վաթսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով պարիսպը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 29112022-08-0045 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N26-Ա որոշումը և քաղաքացի Արտյոմ Մահլամյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2021 թվականին N22230 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Մեքենավարների փողոց N70/2 հասցեի, օրինականացված 5.8(հինգ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը՝ 22840 (քսաներկու հազար ութ հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Արտյոմ Մահլամյանին:
2. Գյումրի քաղաքի Մեքենավարների փողոց N70/2 հասցեի 7.62(յոթ ամբողջ վաթսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 33848 (երեսուներեք հազար ութ հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Արտյոմ Մահլամյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Արտյոմ Մահլամյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Արտյոմ Մահլամյանի միջոցների հաշվին:

13.03.2023

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2023 թվականի N 625-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N2975-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 01-Ի N632-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 29-ի « Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոցի հարևանությամբ կառուցված 249.42 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության եվ դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 232.23 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման մասին» N2975-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 30/08/2022 թվականի NԿ-30082022-08-0045 որոշում);

Ներկայացվել է նոր ճշգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 29-ի « Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոցի հարևանությամբ կառուցված 249.42 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության եվ դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 232.23 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման մասին» N2975-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում նախաբանում և 1-ին կետում <<249.42 (երկու հարյուր քառասունինը ամբողջ քառասուներկու հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<255.63 (երկու հարյուր հիսունհինգ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական)>> թվով և բառերով և <<232.23(երկու հարյուր երեսուներկու ամբողջ քսաներեք հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<211,42(երկու հարյուր տասնմեկ ամբողջ քառասուներկու հարյուրերորդական)>> թվով և բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 01-ի N632-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

14.03.2023

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2023 թվականի N 624-Ղ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱԶԱՉԻ ՊՈՍՏ 2-ՐԴ ԴՈՍ N12/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 102.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 32.46 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (23.62 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ, 39.02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (31.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ՄԱՌԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Կազաչի պոստ 2-րդ դոս N12/1 հասցեում, 102.84(հարյուր երկու ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 32.46( երեսուներկու ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (23.62 (քսաներեք ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ, 39.02( երեսունինը ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (31.0 (երեսունմեկ) քառակուսի մետր ներքին) մակերեսով մառան, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Արշակ Սարգսյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով. համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Կազաչի պոստ 2-րդ դոս N12/1 հասցեում, 102.84(հարյուր երկու ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 32.46( երեսուներկու ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (23.62 (քսաներեք ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը, 39.02( երեսունինը ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (31.0 (երեսունմեկ) քառակուսի մետր ներքին) մակերեսով մառանը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Արշակ Սարգսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Ուժը կորցրած ճանաչել Գյումրու քաղաքապետի 2004 թվականի հոկտեմբերի 08-ի <<Քաղ. Արշակ Սարգսյանի կողմից ինքնակամ կառուցված 32.0 ք.մ. օժանդակ շինություն /ավտոտնակի/ և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին >> թիվ 1573-Ա որոշումը:
6. Լուծել հողամասի վարձակալության 2005 թվականի մարտի 01-ի N40 պայմանագիրը:
7. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N1125476 վկայականը չեղարկելու համար:

13.03.2023

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

***«14» մարտի 2023 թվականի N 623-Ա***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ N14/1 ՀԱՍՑԵԻ 75.27 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻ ( 49.42 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 157.7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԵՅԼԻ, ՀՐԱՆՏ, ԱՆԱՀԻՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆՆԵՐԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Կուրղինյան փողոց N14/1 հասցեի 157.7 (հարյուր հիսունյոթ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի շինությունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N21122022-08-0045 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը համապատասխանում է Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N26-Ա որոշումը և քաղաքացի Հրանտ Եղիազարյանի լիազորված անձ Անահիտ Եղիազարյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականին N91280 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Կուրղինյան փողոց N14/1 հասցեի, օրինականացված 75.27 (յոթանասունհինգ ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (49.42(քառասունինը ամբողջ քառասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը՝ 615332 (վեց հարյուր տասնհինգ հազար երեք հարյուր երեսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Լեյլի, Հրանտ, Անահիտ Եղիազարյաններին:
2. Գյումրի քաղաքի Կուրղինյան փողոց N14/1 հասցեի 157.7 (հարյուր հիսունյոթ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1658058 (մեկ միլիոն վեց հարյուր հիսունութ հազար հիսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Լեյլի, Հրանտ, Անահիտ Եղիազարյաններին:
3.Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացիներ Լեյլի, Հրանտ, Անահիտ Եղիազարյանները պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4.Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Լեյլի, Հրանտ, Անահիտ Եղիազարյանների միջոցների հաշվին:

13.03.2023

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մարտի 2023 թվականի N 622-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԾՈՒԼՈՒԿԻՁԵԻ ՓՈՂՈՑ N2/7 ՀԱՍՑԵԻ 28.98 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻ ( 23.99 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ 13.08 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՏԵՓԱՆ ՔՅՈՒՐՔՉՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ծուլուկիձեի փողոց N2/7 հասցեի 13.08(տասներեք ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտնակը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N28122022-08-0083 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N26-Ա որոշումը և քաղաքացի Ստեփան Քյուրքչյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2021 թվականին N6641 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Ծուլուկիձեի փողոց N2/7 հասցեի, օրինականացված 28.98(քսանութ ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (23.99(քսաներեք ամբողջ իննսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը՝ 109284( հարյուր ինը հազար երկու հարյուր ութսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Ստեփան Քյուրքչյանին:
2. Գյումրի քաղաքի Ծուլուկիձեի փողոց N2/7 հասցեի 13.08(տասներեք ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը օտարման պահին կազմում է 24889 (քսանչորս հազար ութ հարյուր ութսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 325548 (երեք հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Ստեփան Քյուրքչյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Ստեփան Քյուրքչյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Ստեփան Քյուրքչյանի միջոցների հաշվին:

13.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

***«14» ապրիլի 2023 թվականի N 621-Ա***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑ N18/15 ՀԱՍՑԵԻ 2.71 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 58.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՋԱՐՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Կոշտոյան փողոց N18/15 հասցեի 58.8(հիսունութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով շինությունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 30012023-08-0030 վկայական):

